



Վթարվել է ուղղաթիռ



Ավտոմոբիլային վթար



Հրդեհներ փակը



«Հակահրդեհային» ծխախոտներ



արտակարգ թերթ

N 42 (411) 18.11.2011 - 24.11.2011 www.emergency.am www.mes.am

Քննարկվել են Հայաստան-ՀԱՊԿ համագործակցության առաջիկա ծրագրերը



Նոյեմբերի 16-18-ը Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակության՝ Ռուսաստանի Դաշնություն կատարած այցի շրջանակներում նոյեմբերի 17-ին տեղի է ունեցել Արթուր Բաղդասարյանի հանդիպումը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարար Սերգեյ Շոյգուի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը:

Կողմերը քննարկել են արտակարգ իրավիճակների ոլորտում երկկողմ համագործակցության

առնչվող հարցերի լայն շրջանակ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ մշակել գործողությունների ծրագիր 2012-2013 թթ. համար՝ փոխգործակցության խորացմանն ուղղված միջոցառումների ցանկով և ժամանակացույցով: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ժամանակակից մոտեցումների հիման վրա առկա համաձայնագրերի լրամշակման և իրավապայմանագրային դաշտի համապատասխանեցման հարցերը: Այնուհետև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության կենտրոնականում հայաստանյան պատվիրակության, ՌԴ Ազգային անվտանգության խորհրդի, ՀԱՊԿ

ստորաբաժանումների ներկայացուցիչների և փորձագետների մասնակցությամբ տեղի է ունեցել «Հայաստանի համագործակցությունը ՀԱՊԿ շրջանակներում» թեմայով կլոր սեղան-քննարկում: ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Սեմերիկովը հանդես է եկել զեկույցով և բարձր է գնահատել ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության ակտիվ ներգրավվածությունը՝ ընդգծելով Հայաստան-ՀԱՊԿ ակտիվ փոխգործակցության կարեւորությունը: Իր զեկույցում ԱԼԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ամփոփ կերպով ներկայացրել է ՀԱՊԿ շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից

իրականացված աշխատանքները և ապագայի ծրագրերը: Կլոր սեղանի մասնակիցները քննարկել են նաև 2012 թ. Հայաստանի Հանրապետությունում անցկացվելիք ՀԱՊԿ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի զորավարության նախապատրաստմանն առնչվող հարցերը: Կլոր սեղանի ծրագրի շրջանակներում ելույթ է ունեցել նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, որն անդրադարձել է արտակարգ իրավիճակների գծով Հայաստանի կողմից ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող աշխատանքներին և այս ոլորտում համագործակցության ընդլայնման և խորացման հեռանկարներին:

Հայաստանը Թուրքիային տրամադրել է 122 մլն դրամի օգնություն

Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից տուժածներին ցուցաբերած օգնության դիմաց Արտակարգ իրավիճակների նախարարությանը փոխհատուցելու համար կառավարությունը նոյեմբերի 17-ի նիստում 122 մլն դրամ է հատկացրել:

Հոկտեմբերի 28-ին ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչները Իլ-76 ինքնաթիռով Թուրքիայի Էրզրում քաղաք էին տեղափոխել ՀՀ կառավարության աջակցությունը՝ 40 տոննա բեռ. վրաններ, քնապարկեր, ծածկոցներ, անկողնային պարագաներ:

Շվեյցարացի փորձագետը կգնահատի հայ փրկարարների պատրաստվածությունը



Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտ է ներկայացրել ՄԱԿ-ի INSARAG (ԻՆՍԱՐԱԳ) միջազգային որոնող-փրկարարական կազմակերպությանը

փրկարարական ազգային թիմի արտաքին որակավորում անցկացնելու համար: Այն տեղի կունենա 2013 թ. սեպտեմբերին: >>> 4

Հայաստան-Ֆրանսիա՝ նոր հեռանկարներ

Նոյեմբերի 15-ին ԱԽ նախարար Արմեն Երիցյանը ընդունեց ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Ռենդինգի և Վրաստանում Ֆրանսիայի դեսպանատան անվտանգության հարցերով կցորդ Ստեֆան Ռոպերին:



Ողջունելով հյուրերին՝ Արմեն Երիցյանը նշեց, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունը բազմաթիվ ուղղություններով համագործակցում է Ֆրանսիայի գործընկերների հետ, և հույս հայտնեց, որ այդ համագործակցությունը շարունակական կլինի: Դեսպան Ռենդինգը նշեց, որ այս ամառ ԱԽ նախարարի այցը Ֆրանսիա եւս մեկ անգամ ապացուցեց, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունն իրական համագործակցողներն են: «Դատելով մեր նախորդ հանդիպումներից՝ կարող եմ ասել, որ մեր համագործակցությունը ոչ միայն շարունակական պիտի լինի, այլ նաև պիտի ընդարձակվի՝ ներառելով նոր ոլորտներ և ուղղություններ, - ավելացրեց դեսպանը: Նախարար Երիցյանը ներկայացրեց Նախարարության գործունեության հիմնական ուղղությունները: Քաղաքացիական պաշտպանության ուղղությամբ Հայաստանում իրականացվող աշխատանքները լայնածավալ են, տարածաշրջանում առաջինը Հայաստանը ստեղծեց Աղետների ռիսկի մվազեցման ազգային պլատֆորմ, մշակեց ԱՌՆ ազգային ռազմավարությունը: Այսօր Արտակարգ իրավիճակների նախարարությունում գործում է ճգնաժամային կառավարման և ստեղծման և կայացման կենտրոնը, որի ստեղծման և կայացման գործում կա նաև Ֆրանսիայի գործընկերների ներդրումը: Ֆրանսիայի և Հայաստանի համագործակցության կարեւոր ուղղություններից է կամավոր հրշեջ-փրկարարների համակարգի ստեղծումը Հայաստանում: - Հաշվի առնելով Ֆրանսիայում հասարակական հիմունքներով աշխատող հրշեջ-փրկարարների փորձը, այսօր աշխատում ենք նման համակարգ ներդնել Հայաստանի Շիրակի և Լոռու մարզերում: Կարծում եմ, կամավոր հրշեջ-փրկարարական համակարգի ֆրանսիական տարբերակը լավագույններից է, և մենք դրանից շատ բան ունենք սովորելու, - նշեց նախարարը: Ստեֆան Ռոպերը Վրաստանում Ֆրանսիայի դեսպանատան

անվտանգության հարցերով կցորդ նշանակվելուց անմիջապես հետո ցանկություն հայտնեց այցելել Հայաստան և ծանոթանալ մեր երկրների միջև առկա համագործակցությանը: - Կարծում եմ, որ շարունակելով քաղաքացիական պաշտպանության բնագավառում մեր երկրների միջև եղած համագործակցությունը, անհրաժեշտ է ավելացնել նոր ուղղություններ, - նշեց պարոն Ռոպերը: ԱԽ նախարարի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին ճգնաժամային կառավարման կենտրոնում, ծանոթացան դրա տեխնիկական հնարավորություններին և աշխատանքային պայմաններին: ԱԽ նախարարության բարձրարկ սեյսմոլոգիայի նորակառույցը ոչ միայն լավ տպավորություն թողեց հյուրերի վրա, այլև մեծ ցանկություն՝ այդ շենքում շուտափույթ տեսնելու համագործակցության նոր արդյունքները:



Աին
միացյալ հեռախոսահամարն է
1-01

Ղեկավարային թունավորում

Նոյեմբերի 10-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 22.00-ին ղեկավարային թունավորման փոխտնօրինից տեղեկություն է ստացվել, որ ժամը 09.01-ին Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Թերլեմեզյան 24 տան բնակչուհի՝ 1989 թ. ծնված Արուսյակ Մաթեոսյանը:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության:

Նոյեմբերի 11-ին, ժամը 10.36-ին տեղեկություն է ստացվել, որ ժամը 09.01-ին Երեւանի Բանական 10 հասցեի 17-րդ բնակարանի բնակիչներ՝ 2008 թ. ծնված Գ. և 2011 թ. ծնված Ն. Նիկողոսյանները ղեկավարային թունավորումով տեղափոխվել են «Մուրացան» բժշկական կենտրոն:

Բժիշկները տուժածների առողջական վիճակը գնահատել են բավարար:

Նոյեմբերի 16-ին, ժամը 19.33-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Աջափնյակ վարչական շրջանի Սպորտի փողոցի 31 տան բնակչուհի Եսմիրա Չայրապետյանը ղեկավարային թունավորումով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության:

Թունավորում մկնդեղից

Նոյեմբերի 11-ին, ժամը 08.55-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 08.30-ի սահմաններում մկնդեղից թունավորումով Թալինի հիվանդանոց է տեղափոխվել Աշնակ գյուղի բնակիչ՝ 1991 թ. ծնված Ս. Դուկասյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը կայուն ծանր է:

Թունավորում շնու գազից

Նոյեմբերի 14-ին «1-03» ծառայությունից տեղեկություն է ստացվել, որ ժամը 05.40-ի սահմաններում շնու գազից թունավորման նախանշաններով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Երեւանի Կալենցի 1 շենքի 22-րդ բնակարանի բնակիչներ՝ 1997 թ. ծնված Արսեն և 1992 թ. ծնված Արծվիկ Կարապետյանները:

Տուժածների առողջական վիճակը բժիշկները գնահատել են բավարար:

Մենակ եւ անօգնական

Նոյեմբերի 10-ին, 09.54-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Գյուլբենկյան 39 շենքի 28-րդ բնակարանի բնակիչը ընկել է, չի կարողանում տեղաշարժվել. դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Փրկարարները 8-րդ հարկից իջեցրել են 1935 թ. ծնված Լենա Մետրոսյանին և հանձնել շտապ օգնության աշխատակիցներին:

Խցանում՝ առաք ձյան հետեւանքով

Նոյեմբերի 10-ին, ժամը 18.10-ին Արագածոտնի մարզից ահազանգ է ստացվել, որ Գեղարտու-Օիլքար ճանապարհահատվածում մերկասառույցի եւ տեղացած ձյան հետեւանքով ավտոմեքենաները հայտնվել են խցանման մեջ:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ է «Հովհաննես Մարտիրոսյան» ՍՊԸ-ին պատկանող 5 միավոր տեխնիկա:

Պարզվել է, որ խցանման մեջ են հայտնվել մոտ 100 ավտոմեքենա, որոնցից 13-ը խցանումից դուրս են բերվել հրշեջ-փրկարարների օգնությամբ, իսկ մնացածը դուրս են եկել ինքնուրույն:

Երթեկությունը վերականգնվել է:

Նոյեմբերի 10-ին, ժամը 18.20-ին ահազանգ է ստացվել, որ Արագածոտնի մարզի Օիլքար գյուղից դեպի Լոռու մարզի Ջրաշեն գյուղ տանող ավտոճանապարհը ձյան եւ մերկասառույցի պատճառով դարձել է դժվար անցանելի:

Ճանապարհի մաքրման աշխատանքներն իրականացրել են Լոռու մարզի «Սպիտակ ճանապարհ» ՓԲԸ-ի ուժերը:

Ճանապարհը բաց է եւ խցանման մեջ ավտոմեքենաներ չկան:

Մինչեւ ժամը 22.30-ը «Սպիտակ ճանապարհ» ՓԲԸ-ի ուժերն իրականացրել են հերթապահություն:

Նոյեմբերի 12-ին, ժամը 18.07-ին Գեղարքունիքի մարզից ահազանգ է ստացվել, որ Եղեգնաձոր-Մարտունի ավտոճանապարհի 35-րդ կմ-ում առատ ձյան հետեւանքով արգելափակվել են տրանսպորտային միջոցները. առաջացել է խցանում:

Պարզվել է, որ խցանման մեջ են տարբեր մակնիշի 12 ավտոմեքենա:

Դեպքի վայրում «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ի ուժերը («Ռոտոր»՝ 2 հատ, «Գրեյդեր»՝ 1 հատ և «ԶԻԼ 131»՝ 1 հատ) դուրս են բերել 12 ավտոմեքենա եւ իրականացրել մաքրման աշխատանքներ:

Հետագա խցանումները բացառելու նպատակով Գեղարքունիքի եւ Վայոց ձորի ճանապարհային ոստիկանության մարզային ստորաբաժանումները Եղեգնաձոր-Մարտունի ավտոճանապարհին իրականացրել են հերթապահություն:

Ավտոպարահար Եղվարդ-Երնջարափ ավտոճանապարհին

Նոյեմբերի 10-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 14.00-ի սահմաններում Եղվարդ-Երնջարափ ավտոճանապարհի 15-րդ կմ-ին տեղի է ունեցել ավտոպարահար:

«Միցուրիչի Պաշտոն» մակնիշի 11 ՏՏ 664 պետական արանձիղով ավտոմեքենան դուրս է եկել ավտոճանապարհի երթեկուղու մասից եւ շրջվել, ինչի հետեւանքով վարորդ՝ 1993 թ. ծնված Գոռ Բրուտյանը (ք. Երեւան) եւ ուղևորներ՝ Երեւանի բնակիչներ, 1993 թ. ծնված Աշոտ Ազիզյանը, 1993 թ. ծնված Հակոբ Միրաքյանը, 1994 թ. ծնված Վանիկ Սաֆարյանը եւ 1993 թ. ծնված Արման Հովհաննիսյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Ապարանի բժշկական կենտրոն, որտեղ ստանալով առաջին բուժօգնություն՝ դուրս են գրվել:

Քարաթափում

Նոյեմբերի 12-ին, ժամը 15.08-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ Նոյեմբերի 1-ից 12-ը Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 35-րդ կմ-ում տեղի է ունեցել քարաթափում:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Տեղում պարզվել է, որ մշված հատվածում մոտ 130 մ բարձրությունից թափվել են քարե բեկորներ: Տեղումների եւ ցնցումների հետեւանքով հնարավոր է քարաթափումները կրկնվեն: Մոտ 140 մ բարձրության վրա առաջացել է զանգվածի ճեղք, որի փլուզ-

ման հավանականությունը պարզելու համար անհրաժեշտ է համապատասխան մասնագիտական ուսումնասիրություն:

Այս պահի դրությամբ ավտոճանապարհը երթեկելի է:

Բախվել է սյանը

Նոյեմբերի 12-ին, ժամը 21.09-ին ահազանգ է ստացվել, որ Եղվարդի խճուղու թիվ 1 հասցեում «Արմենիա» հեռուստաընկերության դիմաց, տեղի է ունեցել ավտոպարահար, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում՝ սյանը է բախվել «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 07 ՕՏ 225 պետական արանձիղով ավտոմեքենան:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ «1-03» ծառայության աշխատակիցների կողմից «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Երեւանի Բաշինջառյան 2-րդ նրբանցքի 8 շենքի 77-րդ բնակարանի բնակիչներ՝ վարորդ՝ 1991 թ. ծնված Արտյոմ Ավետիսյանը եւ 1989 թ. ծնված Թովմաս Ավետիսյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածների վիճակը բավարար է:

Մեքենան բախվել է էլեկտրասյանը

Նոյեմբերի 16-ին, 00.18-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Իսակովի պողոտայի 25 հասցեում տեղի է ունեցել ավտոպարահար եւ կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ԲՄՎ X-5» մակնիշի 15 LO 687 պետական արանձիղով ավտոմեքենան բախվել է էլեկտրասյանը եւ շրջվել:

Մինչ փրկարարների դեպքի վայր հասնելը՝ ավտոմեքենայի վարորդ՝ 1989 թ. ծնված Ա. Բաբայանը, ուղևորներ՝ 1985 թ. ծնված Էդիկ Մանուկյանը եւ 1982 թ. ծնված Վահագն Մանուկյանը շտապօգնության մեքենաներով տեղափոխվել են Երեւանի «Արմենիա» եւ «Մալաթիա» բժշկական կենտրոններ:

Փրկարարներն ուղղել են ավտոմեքենան, հոսանքազրկել եւ հանձնել ոստիկանության աշխատակիցներին:

Վ. Մանուկյանի առողջական վիճակը բժիշկները գնահատել են բավարար, իսկ Է. Մանուկյանինը եւ Ա. Բաբայանինը՝ ծայրահեղ ծանր: >>>

միջազգային լուրեր

Պայթյուն՝ Չինաստանում

Չինաստանի կենտրոնական հատվածում գտնվող Սիան քաղաքի գրասենյակային բազմահարկ շենքերից մեկում նոյեմբերի 14-ին ուժեղ պայթյուն է որոտացել: Պայթյունի զոհ է դարձել առնվազն յոթ մարդ, այդ թվում՝ երեք տարեկան մի աղջնակ: Տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով հիվանդանոց է տեղափոխվել 25 մարդ:

Պայթյունի հետեւանքով փշրվել են ապակիներ եւ թափվել երկու կիլոմետր շառավղով՝ մեծ վնաս հասցնելով մոտակա ավտոմեքենաներին:

Ըստ նախնական վարկածի՝ շենքի առաջին հարկի ռեստորանում պայթել է կենցաղային գազը:

Պարահարներ՝ ճանապարհին

Միջազգային արեւմուտքում խոշոր ավտոճանապարհային պատահարի հետեւանքով զոհվել է 17 եւ վնասվածքներ

ստացել 10 մարդ: Ըստ տեղական իշխանությունների՝ արեւմտյան Հերատ նահանգից հարավային Գեյմենո նահանգ ուղևորվող ավտոբուսը բախվել է բեռնատարին, որից հետո շրջվել է: Նախնական տվյալներով վթարի պատճառն ավտոբուսի վարորդի անուշադրությունն ու արագության գերազանցումն է եղել:

Հարավաֆրիկյան հանրապետությունում բեռնատարի եւ երթուղային երկու տաքսիների բախման հետեւանքով զոհվել է 20 մարդ, եւս 8-ը մարմնական լուրջ վնաս-



վածքներ են ստացել: Վթարը տեղի է ունեցել նոյեմբերի 15-ի գիշերը՝ Քեյփթաունի ավտոմայրուղու ամայի հատվածում:

Չինաստանի հյուսիսարեւմտյան Հանսյու շրջանում տեղի ունեցած ավտոպատահարի հետեւանքով զոհվել է 19 մարդ, նրանցից 17-ը՝ նախադպրոցական տարիքի երեխաներ: Ըստ տեղական լրատվական գործակալությունների՝ մանկապարտեզի ավտոբուսը բախվել է մարդատար ավտոմեքենայի: Վթարի պատճառները ճշտվում են:

Այրվել է շոգենավ

Նոյեմբերի 14-ի վաղ առավոտյան Մոսկվայի Հյուսիսային գետային նավահանգստում այրվել է «Սերգեյ Աբրամով» շոգենավը: Ըստ Արտակարգ իրավիճակների նախարարության Մոսկվայի գլխավոր վարչության, շոգենավից տարհանվել են բոլոր ուղևորներն ու անձնակազմի անդամները:

Հրդեհից տուժել է չորս մարդ, նրանցից երկուսը տեղափոխվել են հիվանդանոց: Հրդեհի բռնկման պահին շոգենավում եղել է 16 ուղևոր եւ անձնակազմի 15 անդամ: Կրակը տարածվել է շոգենավի բոլոր երեք տախտակամածներում՝ ընդգրկելով 200 քմ տարածք:

Վթարվել է ուղղաթիռ

Նոյեմբերի 11-ին Մեքսիկայի կենտրոնական մասում տեղի ունեցած ուղղաթիռի աղետի հետեւանքով զոհվել է ինը մարդ, այդ թվում՝ երկրի ներքին գործերի նախարար



րար Ֆրանսիսկո Բլեյք Մորան: Ուղղաթիռում գտնվող ինը հոգուց ոչ ոք կենդանի չի մնացել: Բացի նախարարից, ուղղաթիռում եղել են ներքին գործերի փոխնախարարը, հասարակայնության հետ կապերի համակարգողը եւ այլ պաշտոնյաներ:

Վթարված ուղղաթիռի բեկորները ցրվել են մի քանի մետր շառավղով:

Ուղղաթիռի վթարի պատճառները ճշտվում են:



Հայտարարություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին

- Պետական իրդեհային տեսչության Շիրակի մարզային իրդեհային տեսչության տեսչական բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34-4.2-35)
 - Պետական իրդեհային տեսչության Շիրակի մարզային իրդեհային տեսչության իրդեհների հաշվառման, վերլուծության և հակահրդեհային քարոզչության բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34-4.2-36)
- Նշված թափուր պաշտոնները զբաղեցնողները՝
- Մասնակցում են իրդեհատեսչական հետազոտությունների իրականացմանը, հաշվառում են սպասարկման տարածքում գտնվող օբյեկտների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը, մասնակցում են իրդեհների առաջացմանը նպաստող պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ միջոցառումների մշակման աշխատանքներին և բաժնի վարչաիրավական գործունեության վերաբերյալ որոշումների հաշվառմանը, գործավարության կանոնակարգմանը, իրականացնում են բաժնի առջին կարգի գործառնությունների և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և

այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները, իրենց լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետ-ավագ տեսուչի հանձնարարությամբ նախապատրաստում են առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրագրություններ:

Իրականացնում են սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի,
 - սույն պաշտոնների անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իրենց լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
 - համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
 - անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1-2)
- Դիմող ՀՀ քաղաքացիները Նախարարություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակները հետ միասին)**

գրավոր դիմում (ծեղ լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը,
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրականչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափի,
- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթի պետք է ներկայանան ՀՀ անձնագրով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 25.11.2011 թ.:

ՀՀ քաղաքացիները ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կարող են դիմել նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Դավիթբաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8, հեռ. 060-44-02-53):

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. Նոյեմբերի 10-ից 16-ը ՍՊԱԾ-ի դիտարկման շաբաթանվանի Հանրապետության տարածքում 3 բալ և ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցվել:

Տարածաշրջանում. 3 բալ և ավելի ուժգնությամբ գրանցվել է 371 երկրաշարժ, որից 368-ը թուրքիայի արևելքում: Նոյեմբերի 10-ին Վրաստանի Դնամիսի քաղաքից 23 կմ արեւմուտք գտնվող էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունը 4 բալ էր: Նույն էպիկենտրոնային գոտում Նոյեմբերի 14-ին հետեւել է 3 բալանոց ստորգետնյա ցնցում: Նոյեմբերի 13-ին Իրան-Թուրքիա սահմանային գոտում՝ Խոյ քաղաքից 45 կմ հարավ-արեւմուտք տեղի է ունեցել 3 բալ ուժգնությամբ երկրաշարժ:

Դեռ շարունակվում է սեյսմիկ ակտիվությունը թուրքիայի արեւ-

ելյան հատվածում: Անցած շաբաթ գրանցվել է 368 հետցնցում, որից մեկը՝ 6-7 բալ ուժգնությամբ (5.2 մագնիտուդ): Վերջինս տեղի է ունեցել Նոյեմբերի 15-ին՝ կեսգիշերին, Վան քաղաքից 35 կմ հյուսիս-արեւմուտք: Ստորգետնյա ցնցումների հետեւանքով քաղաքի և մոտակա մասամբ լքված բնակավայրերի բնակիչները խուճապահար լքել են բնակարանները:

Տարածաշրջանից դուրս. 6.3 մագնիտուդով գրանցվել է մեկ ուժեղ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել Նոյեմբերի 14-ին Մոլդովյան ծովում՝ համանուն կղզիների տարածքում (Ինդոնեզիա): Սեյսմիկ ակտիվության հետեւանքով խուճապ է առաջացել ինդոնեզական Պապուա ինքնավար նահանգում:

ԱՆՆ ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում Նոյեմբերի 18-ից 20-ը շրջանների զգալի մասում սպասվում են թույլ տեղումներ: 21-ին և 22-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին՝ հյուսիս-արեւմտյան 2-7 մ/վրկ: Օդի ջերմաստիճանն էսպես չի փոխվի:

Օդի ջերմաստիճանը Նոյեմբերի 18-ին գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ -1... -6, Տավուշում՝ -1... +4, Լոռիում՝ 0... -5, Արագածոտնի նախալեռներում՝ 0... -3, Արարատյան դաշտում՝ -2... +2, Սյունիքի հովիտներում՝ 0... +3, Սյունիքի նախալեռներում՝ -2... -5, Արցախում՝ 0... +3 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը Նոյեմբերի 18-ին ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ 0... +5, Տավուշում՝ +5... +10, Լոռիում՝ +2... +7, Արագածոտնի նախալեռներում՝ +1... +6, Արարատյան դաշտում՝ +3... +7, Սյունիքի հովիտներում՝ +7... +12, Սյունիքի նախալեռներում՝ +3... +7, Արցախում՝ +5... +9 աստիճանի սահմաններում:

Երեւանում Նոյեմբերի 18-ից 20-ը ժամանակ առ ժամանակ սպասվում են թույլ տեղումներ, իսկ 20-ին և 21-ին սպասվում է առանց տեղումների եղանակ:

Օդի ջերմաստիճանը Նոյեմբերի 18-ին գիշերը կտատանվի -1... +1, ցերեկը՝ +4... +6 աստիճանի սահմաններում:

Արտակարգ իրավիճակներ ԼՂՀ-ում Նոյեմբերի 10-ից 17-ը

Հրդեհներ
Նոյեմբերի 12-ին հրդեհ է բռնկվել Ստեփանակերտ քաղաքի Ա. Առաքելյան փողոցի 17 շենքում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով այրվել է Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի շենքի տանիքն ամբողջությամբ: Նոյեմբերի 14-ին հրդեհ է

բռնկվել Ա. Առաքելյան փողոցում: Դեպքի վայր է մեկնել 1 մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է: Բռնկված հրդեհի հետեւանքով այրվել են թեփ և էլեկտրական լարեր:

ԼՂՀ փրկարար ծառայության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին



>>> Շաբաթվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 33 դեպք, որոնց գերակշռ մասը տեղի է ունեցել խոտածածկ տարածքներում:

Փագի արտահոսք՝ բռնկումով

Նոյեմբերի 13-ին, ժամը 14.22-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Տիգրան-Ոսկանյան փողոցների խաչմերուկի մոտակայքում գազատարից (ստորգետնյա) տեղի է ունեցել արտահոսք և բռնկում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ «1-04» ծառայության աշխատակիցների վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ժամանակ գազատարից տեղի է ունեցել արտահոսք և բռնկում, որը վերացվել է տեղի ուժերով:

Այրվել է ավտոմեքնա

Նոյեմբերի 14-ին, ժամը 11.16-ին ահազանգ է ստացվել, որ Բարեկամության հրապարակում (Հ. Քոչար փողոցից հարակից) այրվում է ավտոմեքենա:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 11.26-ին, մարվել՝ 11.39-ին: Ամբողջությամբ այրվել է «Կավալեր» տաքսի ծառայությանը պատկանող «ՍԵՆՍ» մակնիշի S 61 84 պետհամարանիշով ավտոմեքենան:

«Էլիտ Գրուպ» . կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում և այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Գիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Քննարկվել են կլիմայի և հիդրոլոգիայի հիմնախնդիրները



ՀՀ ԱԻՆ Հայաստանի գործընկերության առաջարկությամբ նոյեմբերի 14-ին Երևանի «Աճի Պլազա» հյուրանոցի նիստերի դահլիճում իր աշխատանքն սկսեց Համաշխարհային Օդերևութաբանական կազմակերպության (ՅՕԿ) VI-րդ տարածաշրջանային ասոցիացիայի (Եվրոպա) կլիմայի և հիդրոլոգիայի աշխատանքային խմբի (ԿՀԱԽ) երկրորդ ժողովը, որը տևեց 3 օր: Խումբը ստեղծվել է 2009 թ. սեպտեմբերին՝ ՅՕԿ-ի VI-րդ տարածաշրջանային ասոցիացիայի XV-րդ նստաշրջանի որոշմամբ: ԿՀԱԽ-ի ստեղծման նպատակն է կլիմայի և հիդրոլոգիայի ոլորտներում աշխատանքների ինտեգրումը և փորձագետների սերտ համագործակցությունը՝ տարածաշրջանում հիդրո-կլիմայական աշխատանքների համատեղ իրականացման համար:

ԿՀԱԽ գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է Եվրոպայի տարածաշրջանում կլիմայի և հիդրոլոգիայի ոլորտներում իրականացվող աշխատանքների կազմակերպմանն ու համակարգմանը՝ սերտորեն համագործակցելով ոլորտներին առնչվող տարածաշրջանային և միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ:

Միջոցառման բացմանը ՀՀ ԱԻՆ նախարար Արմեն Երիցյանի ուղղությամբ խոսքը ներկայացրեց նախարարի տեղակալ Ռ. Տիգրանյանը: Միջոցառմանը մասնակցում էին ՅՕԿ-ի Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Դիմիտր Իվանովը, կլիմայի և հիդրոլոգիայի աշխատանքային խմբի համանախագահներն ու անդամները: Ժողովի ընթացքում քննարկվել են մինչ այժմ խմբի կողմից կլիմայի և հիդրոլոգիայի ոլորտներում կատարված աշխատանքները, նվաճումներն ու ձեռքբերումները, ինչպես նաև՝ նախանշվել հետագա քայլերը:

Շվեյցարացի փորձագետը կզննարարի հայ փրկարարների պատրաստվածությունը

«**<<< 1**» Սա փրկարարների այն կազմն է, որն անհրաժեշտության դեպքում օգնություն ցույց տալու կնենկնի աղետից տուժած այլ երկիր: Որակավորում անցնելը կարելու պայմանն է սեփական երկրից դուրս օգնություն ցուցաբերող յուրաքանչյուր ազգային փրկարարական թիմի համար:

Հայաստանի ԱԻՆ փրկարարական թիմի պատրաստվածությունը գնահատելու համար նոյեմբերի 14-17-ը Երևանում էր Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇՁՀԳ) փորձագետ, INSARAG-ի՝ Շվեյցարիայում ազգային պատասխանատու Ուստ Ամիեթը:

Իմ այցի ընթացքում ես կուսումնասիրեմ Հայաստանի փրկարարական թիմի պատրաստվածությունը և կարողությունները: Ուշադրություն է դարձվելու բոլոր բաղադրիչներին՝ կառավարման, որոնողական, փրկարարական, բժշկական, նյութատեխնիկական: Արդյունքները ես կվերլուծեմ իմ զեկույցում և, ըստ այդմ, կորոշվեն հետագա անելիքները, - ասաց Ուստ Ամիեթը:

Որակավորմանը պատրաստվող թիմում միայն փրկարարներ չեն լինելու, ընդգրկվելու են նաև մասնագետներ ԱԻՆ տարբեր ստորաբաժանումներից, որոնք էլ իրականացնելու են թիմի կառավարման աշխատանքները: ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության գնդապետ, բնակչության և տարածքների պաշտպանության վարչության պետ Հովհաննես Եմիշյանը, ով նաև INSARAG-ի Հայաստանի ազգային պատասխանատուն է, նշում է, որ կան հստակ պահանջներ:

Միայն փրկարարական աշխատանքները լավ կատարելը բավարար չէ, հարկավոր է, որ յուրաքանչյուր թիմ կարողանա դեպքի վայրում համա-

գործակցել ՄԱԿ-ի համապատասխան կառույցների հետ, գինված լինի արբանյակային կապով և այլ պահանջներ: Եթե որեւէ թիմ չի կարողանում այս ամենը ճիշտ կազմակերպել, ապա տուժած երկրի համար պարզապես բեռ է դառնում: Շվեյցարացի փորձագետն այս ընթացքում կօգնի մեզ հասկանալու մեր կարողություններն ու բացերը, կ-



որոշվեն հետագա քայլերը, կկազմվի աշխատանքային ծրագիր, ըստ որի մենք կառաջնորդվենք, որպեսզի մինչև 2013 թվականի սեպտեմբերը պատրաստ լինենք:

Հ. Եմիշյանը նաև նշեց, որ հայ մասնագետները տիրապետում են INSARAG-ի մեթոդներին և սկզբունքներին: 2005 և 2009 թվականներին INSARAG-ի շրջանակներում Հայաստանում անց են կացվել միջազգային խոշոր ուսումնական ծրագրեր: «Քաղաքային որոնողական փրկարարական խմբերի գործողություններն ուժեղ երկրաշարժի ժամանակ» թեմայով «Արմենիա 2009» միջազգային փրկարարական ուսումնական ծրագրից հետո ԱԻՆ փրկարար ծառայության 2 աշխատակիցներ ընդգրկվեցին INSARAG կազմակերպության խորհրդում:

Բանգկոկը՝ ջրի տակ

Թայլանդի մայրաքաղաք Բանգկոկի կենտրոնը թվում էր, թե կխուսափի ջրհեղեղից, որը լուրջ վնասներ է հասցրել դրանից հյուսիս ընկած արվարձաններին ու գավառներին, բայց տարիանման հրանմանները դեռ արձակվում են ամեն օր, և շատ բնակիչներ շաբաթներ շարունակ տառապում են:

Աղետների կանխարգելման ու նվազեցման բաժինը երկուշաբթի օրը հայտնեց, որ 562 մարդ է մահացել ջրհեղեղի հետևանքով, հուլիս ամսից ի վեր, և որ Թայլանդի 77 գավառներից 22-ը դեռ կրում են աղետի հետևանքները:

Ջուրը նահանջում է Բանգկոկի որոշ հատվածներում, բայց դրա մակարդակը դեռ բարձր է Չաո Ֆրայա գետի արեւմտյան ափին՝ ուռչելով Թայլանդի ծոցի բարձր ալիքների շնորհիվ, ու նաև մայրաքաղաքի արեւելքում, որտեղ իշխանությունները հեղեղաջրերի ուղղությունը փոխել են հյուսիսից՝ փորձելով պաշտպանել խիտ բնակեցված Բանգկոկի սիրտը:

Քալին Փրաչունկուլը 21-ամյա ուսանող է Բանգկոկի Թիամասաթ համալսարանից և որոշել է իր շան հետ մնալ տանը՝ Բանգկոկի արեւմտյան Նոնգ խամ թաղամասում, որը հեղեղվել էր նոյեմբերի սկզբին:

Իմ սննդի պաշարներն արդեն սկսում են սպառվել: Հիմա ես արագ պատրաստվող մակարոնի մի քանի փաթեթ ունեմ: Բայց դա այնքան էլ սարսափելի չէ ինձ համար՝ ես դեռ կարող եմ, մինչև ծկներս ջրի մեջ, հասնել հիմնական ճանապարհին, որտեղ սննդի մի քանի ավտոմատ կա, - ասում է նա, ավելացնելով, որ հարեւաններից միայն մի քանիսն են մնացել:

54-ամյա Քրիստանա Լաոնգկայուն ստիպված է եղել լքել իր տունը արեւմտյան Բանգկոկում նոյեմբերի 2-ին՝ ամուսնու և երկու որդիների հետ, այն բանից հետո, երբ ջուրը հասել է գոտկատեղին:

Նա նաև կորցրել է ավանդական թայլանդական մերսման իր սրահը, որում ներդրել էր իր ամբողջ խնայողությունը:

Իսանութ ընդամենը երեք ամիս էր, որ բացել էի: Ներքին հարդարումը հոկտեմբերի վերջին էին ավարտել: Ամեն ինչ կորավ, - ասում է Քրիստանա ու լալիս, - ես շատ վշտացած եմ... Ամուսինս ու ես ամեն ինչ սկսել էինք գրոյից ու հիմա վերադարձանք գրոյին: Ես չգիտեմ, թե ինչ կկարողանանք փրկել խանութը:



թից: Ջուրն այնքան արագ բարձրացավ, և ես ժամանակ չունեցա նախապատրաստվելու: Ինձ ասացին, որ ջուրը մինչև ծնկները կհասնի: Սկզբում ես որոշել էի տանը մնալ, բայց ջուրը շարունակում էր բարձրանալ:

Խոշորածավալ մաքրություն

Արեւմտյան Թիանթուրի շրջանում հիմնական ճանապարհները շարունակում են փակ մնալ: Որոշ երթուղիներով մի քանի ավտոբուսներ են երթելու, բայց մարդկանց մեծ մասը ստիպված է հույսը դնել գինվորական բեռնատարների կամ փոքր մավակների վրա, որոնք միշտ լիքն են:

Մայրաքաղաքի չոր մնացած շրջանների խանութներում կրկին խմելու ջուր են վաճառում, բայց տեղ-տեղ միայն օրաբաժին են տալիս:

Անցյալ հանգստյան օրերին ջուրը սկսեց հետ քաշվել, և սնունդ վաճառող վագոնները

նորից հայտնվեցին փողոցներում, վերաբացվեցին լապշայի խանութներն ու գեղեցկության սրահները՝ գրասենյակային աշխատողների համար: Գործարարները հսկայական մաքրություն սկսեցին՝ ավել-սրբելով ջուրն ու կուտակված աղբը, որն օրեր շարունակ լողում էր գարշահոտ շագանակագույն ջրի մեջ:

Իշխանությունների գնահատմամբ՝ մոտ 16 000 մարդ է

տեղավորվել Բանգկոկի կենտրոնի 163 տարիանման կետերում: Շատերն էլ բնակարան են վարձել կամ բարեկամների տներում են տեղավորվել երկրի հյուսիսում, որտեղ ջուրն արդեն նահանջել է, կամ էլ հարավում կամ հարավ-արեւելքում, որտեղ ջուրը չի հասել:

Նրանց կյանքը, ովքեր գնացել են, ավելի անվտանգ է, բայց ավելի ուրախ չէ:

Տնային տնտեսուհի Քիմ Սիր-նիդիորնը լքել է Նախոն Փաթոմ գավառում գտնվող իր տունը և գնացել Ռայոնգ ծովափնյա հանգստավայրը: Նրա տան մոտ ջուրը բարձրացել է 64 սմ-ով, և նրան ասել են, որ մի քանի շաբաթ կտևի՝ մինչև այն հետ քաշվի:

Ես դեպրեսիայի մեջ եմ ու շփոթված: Մենք ոչինչ չունենք ամելու՝ մի սենյակում ենք նստած ու ձանձրանում ենք, - ասում է նա:

Խեթիյա Ջիտապոնգ
Բանգկոկ,
14.11.11 (Reuters)



մասնագետի անկյուն

Թուրքիայի երկրաշարժից հետո. Ե՞րբ է սթափվելու աշխարհը

www.times.com

Երկրաշարժը, որն ավերեց Թուրքիայի հարավը հոկտեմբերի 23-ին, ինչքան որ անխուսափելի էր, այնքան էլ՝ ցնցող: Անխուսափելի էր, քանի որ Թուրքիան գտնվում է աշխարհի ամենաակտիվ՝ բազմաթիվ խզվածքներով սեյսմիկ գոտիներից մեկում:

Ինչպես Կալիֆոռնիայում կամ Ճապոնիայում, երկրաշարժերը Թուրքիայի երկրաբանական կյանքի իրողություն են: Միևնույն ժամանակ՝ ցնցող էր, որովհետև այդքան մարդ, մեծ մասը երսիզ (Արճեշ) քաղաքում, զոհվեց 7.2 մագնիտուդով երկրաշարժի հետևանքով: Դա ուժեղ երկրաշարժ էր, բայց ոչ այնքան հզոր, որ քան 9.0 մագնիտուդով իրեշը, որը ցնցեց ճապոնիան այս գարնանը: Այնուամենայնիվ, բազմաթիվ բազմաթիվ շենքեր պարզապես հողին հավասարվեցին՝ փլատակներում թողնելով հարյուրավոր մարդկանց:

- Ենթերը մեր շուրջն այնքան արագ փլուզվեցին, - ասում է 32-ամյա Աբուբեկիր Ասարը, - մի պահ ոչինչ չէր երևում, ամեն ինչ պատված էր փոշով, հետո լավեցին ճիչեր, ու սկսեցինք հասնել նրանց, ու կարողանում էինք հասնել:

Երկրաշարժը մեկ անգամ ես հիշեցրեց՝ բնական աղետի հետևանքով մահածացնե-

րի թիվը եւ վնասի չափն ավելի շատ պայմանավորված է երկրաշարժին կամ փոթորկին պատրաստվածությամբ կամ դրա բացակայությամբ, քան այդ բնական երևույթների ուժգնությամբ: Երկրաշարժերի դեպքում, որոնք մինչ օրս չեն կանխատեսվում եւ երբեք էլ չեն կանխատեսվի, ամենալավ պատրաստվածությունը հզոր սեյսմակայուն շինարարությունն է:



Իսկապես շատ մտահոգիչ է եւ սարսափելի, որ երկրաշարժի սպառնալիքը միայն աճում է, եւ ոչ թե այն պատճառով, որ դրանք դառնում են ավելի ուժեղ կամ հաճախակի: Ոչ, սպառնալիքը մենք ենք՝ երկրագնդի բնակչությունն ավելանում է եւ արդեն գերազանցում է 7 միլիարդը: Մենք կուտակվել ենք մեզաբաղադրելով, որոնց մեծությունը տասնյակ անգամ գերազանցում է անցյալի

բնակավայրերին: Աշխարհում հիմա կա առնվազն 1 միլիոն բնակիչ ունեցող ավելի քան 380 բնակավայր, եւ ավելի քան 400 մլն մարդ ապրում է բարձր սեյսմիկ ռիսկի քաղաքներում:

Այդ քաղաքներից են Սան Ֆրանցիսկոն, Լոս Անջելեսը եւ Տոկիոն՝ երեքն էլ անցյալ մի քանի տասնյակ տարիների ընթացքում տուժել են ուժեղ երկրաշարժերից: Բայց զարգացած երկրների բարեկեցությունը հիմնականում, թեեւ ոչ միշտ, երաշխավորել է սեյսմակայուն շինարարությունը: Սան Ֆրանցիսկոն մատած է հզոր Սան Անդրեսա խզվածքի վրա, սակայն երկրաշարժերի տարիների փորձը խոսում է այն մասին, որ ոչ միայն շենքերը, այլ նաեւ բնակչությունը պատրաստ են դիմագրավելու հաջորդ Սեծին: Նույնն է Տոկիոն՝ խիստ շինարարական սեյսմիկ նորմերի շնորհիվ հաջողվեց խուսափել կորուստներից:

Իրական վտանգը զարգացող երկրներում է՝ աղքատ, բայց արագ աճող քաղաքներում: Բնակչության աճը հետագա մի քանի տասնյակ տարիներին տեղի կունենա Ասիայում ու Ամերիկայի Աֆրիկայում՝ նորահայտ մեզաբաղադրելի անբարեկարգ թաղամասերում: Դարի կեսին մեզաբաղադրելի մեծ մասը կլինեն զարգացող երկրներում՝ Նյու Դելի, Կարաչի կամ Դաքա: Այսինքն, առկա է աղետալի բարձր մահացության բաղադրատոմսը՝ ուժեղ երկրաշարժին չհամապատասխանող խիտ բնակեցված պայման-

ներում ապրող աղքատների հոծ զանգվածներ:

Աղետակայունության հասնելու մի ուղին տնտեսապես զարգանալն է՝ ավելի բարեկեցիկ բնակչությունն ընդհանուր առմամբ ավելի ունակ է դիմակայելու աղետներին: Սակայն միայն լավ ապրելը բավական չէ, ինչպես դա ցույց տվեց Թուրքիայի օրինակը: Պարտադիր չէ հարուստ լինեք, որ պատրաստ լինեք ցնցումներին: Սեյսմակայուն շինարարության մասնագետ Սանտյագո Պույոլը՝ Պրոդյուս համալսարանից, կառույցներ է նախագծում էժան շինանյութերից՝ ծղոտ, կավ եւ մանրախիճ, որոնք ցնցումների ժամանակ չեն փլուզվում, իսկ երբ, այնուամենայնիվ, փլուզվում են, գոհերի թիվն անհամեմատ քիչ է լինում:

Երկրաշարժի, ինչպես նաեւ այլ աղետների դեպքում, նախապատվությունը հազվադեպ է տրվում կանխարգելմանը: Այդ մոտեցումն անհրաժեշտ է փոխել: Հաջորդ կես դարում բնակչությունը կավելանա 2 միլիարդով, եւ կկառուցվի մոտ 1 միլիարդ տուն եւ բնակարան: Երկրաշարժերը կլինեն, մենք չենք կարող դրանք կանգնեցնել: Եւ թե ինչքան մարդ կզոհվի ցնցումների ժամանակ, կախված է նրանից, թե ինչքանով են ամուր կառուցվող շենքերը եւ ինչքանով մենք կարող ենք վերահսկել իրավիճակը:

Հայկ Հակոբյան, ԱՆ Արտաքին կապերի վարչություն

օգտակար խորհուրդներ

Ավտոմոբիլային վթար

Հարյուրամյա պատերազմը, որը շարունակվում է մարդկանց ու մեքենաների միջև, ՄԱԿ-ի տվյալներով, տարեկան մոտավորապես հարյուր յոթանասուն հազար մարդկային կյանք է խլում:

Ավտոմոբիլային յուրաքանչյուր վարորդի պատմում են, որ վթարը քիչ հավանական է այն վարորդի համար, որն առավել զգուշավոր է, ուշադիր, ունակ է կանխագգալու դեպքերի զարգացումը, կարողանում է խուսափել վթարային իրավիճակից ու վճռական գործողությունների է ձեռնարկում վտանգավոր պահերին: Նման վարորդը կարողանում է գտնել համապատասխան արագություն, որը հնարավորություն կտա ապահովելու մեքենայի վերահսկողությունը:

Ըստ էության, մեզ մոտ ստացվում է «ողջ մնալու դպրոցի» գերազանցիկ կատարյալ նկարագիր: Բնականաբար, ծայրահեղ պահերին պահանջվում են տարբեր գիտելիքներ եւ հմտություններ, սակայն, գրեթե միշտ՝ միանման մարդկային հատկանիշներ:

Վիճակագրությունը վթարների կարեւորագույն պատճառներից է համարում.

- ավտոճանապարհային երթևեկության կանոնների տարբեր խախտումները.
- արագության ավելացումը.
- ոչ սթափ վիճակում մեքենա վարելը,
- վատ ծանապարհները (ընդ որում՝ դյուրասահ),
- մեքենայի անսարքությունը (առաջին հերթին՝ արգելակը, երկրորդ հերթին՝ դեկալառավարումը, երրորդ՝ անիվները եւ անվաղողները):

Այս ցուցակը մեծ նորություն է Վարորդների համար: Սակայն վթարների տիպոլոգիայից կայանում է նրանում, որ ինֆորմացիայի տեղին օգտագործումն է միայն ապահովում մեր անվտանգությունը: Օրինակ՝ գլխակալները եւ անվտանգության գոտիները փոքրացնում են հնարավոր մահացության դեպքերը ճակատային հարվածներ-

րի դեպքում երկու-երեք, իսկ մեքենայի շրջվելու դեպքում՝ հինգ անգամ: Վարորդը, առանց անվտանգության գոտու, նույնիսկ 20 կմ/ժ արագության դեպքում ընթանալիս, ինչ-որ արգելիչի հարվածելու դեպքում, ամենայն հավանականությամբ, վնասվածք է ստանում: Դրան հավասարազոր է 50 կմ/ժ արագությամբ չորրորդ հարկից դեմքով դեպի ցած թռչելը:

Յուրաքանչյուր ճՌ-ի աշխատակից հաստատում է, որ անփութությունը, ինքնակատարությունը, անդաստիարակությունը, ինչպես նաեւ բնավորության տոհմ զօժերը՝ ճանապարհային երթևեկության համար մահացու վտանգ են ներկայացնում: Եվ սա բացառիկ դեպք չէ: 1993 թ. Մոսկվայի՝ արտասահմանից ժամանած հյուրերից մեկն ասել է, որ քաղաքում մշտական աղետի զգացողություն կա. «Ես տեսա, թե ինչպես էին մեքենաներն անցնում կարմիր լույսի տակով»:

Ինչպե՞ս վարվել, եթե վթարն անխուսափելի է

Ասում են, որ մեքենայի դեկավարման հիմնական բարդությունն սկսվում է այն ժամանակ, երբ մեքենան գտնվում է օդում: Իսկ, երբ գոնե մեկ անիվը հպվում է գետնին, վարորդը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է դեկավարել մեքենան:

Ահա փորձառու վարորդների մի քանի խորհուրդներ.

- Վթարի դեպքում պետք է բոլոր մկանները ծայրաստիճան լարված լինեն:
- Նախքան կանգ առնելը չի կարելի թուլացնել մկանները:
- Մինչև մեքենայի կանգ առնելը չի կարելի այն լքել (դա լավ ստացվում է միայն ֆիլմերում): Քննությունը ցույց է տալիս, որ մեքենայում կենդանի մնալու հավանականությունը 10 անգամ ավելի շատ է, քան դուրս նետվելու ժամանակ:
- Պահպանել ինքնատիրապետում՝ դա հնարավորություն կտա մինչև վերջին պահը դեկավարել մեքենան:

• Անել ամեն ինչ, հանդիպակաց հարվածից խուսափելու համար՝ ջրատար առու, ցանկապատ, թուփ, նույնիսկ ծառ կամ հանդիպակաց եկող մեքենա:

• Անշարժ առարկային հարվածելու դեպքում հարվածը աչ կամ ձախ թևերից ավելի վտանգավոր է, քան ողջ ճակատային մասով, պետք չէ վախենալ, եթե շարժիչը միջուկի ավտոսրահ՝ նախագծողները վաղուց մտահոգվել են, որ շարժիչը իջնի ցած:

Եթե հարվածն անխուսափելի է, ամենից կարևորը մարմնի առաջ նետվելու խոչընդոտումն է եւ գլխի պաշտպանումը: Պետք է մեջքով ամուր սեղմվել նստարանին, լարել բոլոր մկանները, ձեռքերով հենվել դեկանիվին: Այս տարբերակն այն մեքենաների համար է, որոնք ընթանում են ցածր արագությամբ: Եթե արագությունը գերազանցում է 60 կմ/ժ-ը, իսկ վարորդը չի ամրացրել անվտանգության ամրագոտիները, նա պետք է կրծքով սեղմվի դեկանիվին: Բոլոր մկանները պետք է քարանձան եւ լարված մնան՝ մինչև մեքենայի ընթացքի կանգ առնելը:

Ուղեւորը պետք է ձեռքերով փակի գլուխը եւ թեքվի կողքի, եթե կողքին երեսնա կա, ապա, ամուր սեղմվելով երեսնային իրեն, ծածկի նրան եւ կրկին թեքվի: Ուղեւորների համար ամենավտանգավոր տեղը առջեւի նստարանն է, ուստի մինչև տասներկու տարեկան երեխաներին, ըստ ճանապարհային երթևեկության կանոնների, առանց հստակ սարքավորման արգելվում է առաջին նստարանին նստեցնել:

Հարվածից հետո առաջին հերթին պետք է կողմնորոշվել, թե մեքենայի որ մասում եւ ինչ դիրքով ես գտնվում, չի իրկիզվում՝ արդյոք մեքենան, արդյոք վառելանյութը չի արտահոսում (հատկապես մեքենայի շուրջ գալու դեպքում): Ելնելով իրավիճակից՝ պետք է շարժվել դեպի ելք՝ կամ դռան, կամ պատուհանի կողմ: Եթե դռները չեն բացվում, ապա պետք չէ ժամանակ կորցնել, ճիշտ է ջարդելով լուսամուտը դուրս սողոսկել (փորձառու վարորդների մոտ սարքահաստիչը ձեռքի տակ է ցանկացած դեպքում):

Եթե մեքենան ընկել է ջուրը (ճիշտ է, նման վթարները հաճախակի պատահում են ֆիլմերում, քան կյանքում), ապա այն որոշակի ժամանակ լողում է ջրի վրա: Մի քանի վայրկյանն էլ բավական է մեքենայից դուրս



թռչելու համար: Պետք չէ բացել դռները, քանի որ ջուրն անմիջապես կլցվի ներս եւ մեքենան կտրուկ կսուզվի: Պետք է դուրս սողոսկել բաց լուսամուտի միջոցով:

Մեքենայի սուզման ընթացքում սրահում օդը մի քանի րոպե է բավականացնում: Եւ դա էլ քիչ չէ: Պետք է միացնել լուսարձակները (որպեսզի մեքենային գտնելը հեշտ լինի), զննահատել իրավիճակը, ակտիվորեն օգտակար թրթրերը (խոր շնչումն ու արտաշնչումը թույլ են տալիս, որ արյունը լցվի թթվածնի «պաշարով»): Պետք է ազատվել ավելորդ հագուստից, արձակել փողկապը, մեքենայից վերցնել բոլոր փաստաթղթերը:

Եւ ամենազլխավորը՝ մտովի պատկերացնել ճանապարհը դեպի վեր: Հարկավոր է դուրս նետվել դռով կամ պատուհանով (լավագույն տարբերակն է, որ դա կատարվի իջեցված ապակու միջոցով), ճեղքել-անցնել դեպի դուրս, ձեռքերով կառչել մեքենայի ծածկից, ձգվել, այնուհետեւ կտրուկ լողալ դեպի վեր: Եթե մեքենայի դուռը խափանվել է եւ ապակին չի իջնում, պետք է անհապաղ ջարդել ճակատային պատուհանը՝ նախօրոք մտածելով, թե ինչով դա անել: Մեքենայից դուրս գալ հնարավոր է այն դեպքում, երբ մեքենան կիսով չափ է լցված ջրով: Եթե կտրուկ բացեք դուռը եւ աշխատեք դուրս գալ մեքենայից, ապա ձեզ կխանգարի ջրի՝ դեպի սրահ լցվող հոսքը:

Մեքենայից դուրս գալուց հետո պետք է նկատի ունենալ, որ ունեք 30-40 վայրկյան: Դա լիովին բավարար է ջրի մակերեսային հասնելու համար: Ջրի 30 մետրից ավել խորությունը համարվում է ամենավտանգավորը, սակայն նման խորության մեջ մեքենայի ընկղմվելը գործնականում անհնար է:



Երեխաների համար

Չորեկներ փանը

Որպեսզի հրդեհները չսպառնան ձեզ, ձեր ընտանիքի անդամներին ու ձեր նյութական միջոցներին, նախելառաջ պետք է այնպես ապրել, որ դրանք ընդհանրապես չլինեն:

- Միշտ պետք է հիշել հակահրդեհային անվտանգության հետևյալ կանոնները.
- չի կարելի խաղալ լուցկիներով կամ կրակվառիչներով.
- առանց մեծահասակների մի նուտեցիր վառարանին եւ մի բացիր դռնակը: Դուրս բռնող կրակներից կամ մոխրից կարող է հրդեհվել բնակարանը.
- չի կարելի օգտագործել ինքնաշեն էլեկտրասարքավորումներ.
- մեկ վարդակից (ռոզետկա) չի կարելի միացնել մի քանի էլեկտրասարքավորում.
- տոնածառից մի կախիր էլեկտրական զարդեր եւ լույսեր, նաեւ հիշիր, որ բամբակյա մորուքներն ու թղթե ֆիկոնցները հեշտ են բռնկվում.
- երբեք տանը մի վառիր բեռնալարով կրակներ եւ հրավառելիք (եւ ընդհանրապես, երբեք լավ է դա անել միայն մեծահասակների

- ներկայությամբ).
- բենզինով լցված մետաղյա տարողությունն ավելի անվտանգ է, քան բենզինից դատարկված տարողությունը, քանի որ դրանք ստանում կարող են կուտակվել բենզինի պայթուցիկության գոլորշիներ՝ օդի հետ խառնված վիճակում.
- չի կարելի կրակի մեջ օգել անծանոթ առարկաներ, մասնավորապես՝ ալյուրալային տուփեր, քանի որ դրանք եւս պայթուցիկության են.
- երբ տանը կա կրակմարիչ, ապա անպայման ծանոթացիր դրա օգտագործման կանոններին: Չիշիր, որ մեկ կրակմարիչը փոխարինում է լոգարանի մեկ վառարանը.
- կրակմարիչները լինում են փրփուրային, ածխաթթվային եւ փոշե. (ածխաթթվային կրակմարիչներով կարելի է մարել բոլոր տեսակի այրվող նյութերը, նույնիսկ լարման տակ գտնվող էլեկտրասարքավորումները: Իմիջիայլոց՝ լարման տակ գտնվող էլեկտրասարքավորումները չի կարելի մարել ջրով կամ փրփուրային կրակմարիչներով, քանի որ կարող էր հոսանքահարվել: Նախ պետք է անջատել հոսանքից, այնուհետեւ՝ մարել).
- մի չորացրու լվացքը էլեկտրասալիկի վերելում. շատ լավ է,

- որ դու մայրիկին օգնում ես, բայց վատ կլինի, եթե այն բռնկվի եւ հրդեհի պատճառ դառնա:
- Վառարաններ ու կենցաղային ջեռուցման սարքեր օգտագործելիս արգելվում է.**
- վառարանները տեղադրել ելքի-մուտքի ուղիներում եւ թողնել առանց հսկողության.
- վառարանները գործարկելու համար օգտագործել բենզին եւ այլ դյուրավառ հեղուկներ.
- բնակելի շենքերում ծխախեռացման համար օգտագործել օդափոխման եւ գազային անցուղիները.
- վառարանները տեղադրել դյուրավառ պատերից, միջնորմներից, ինչպես նաեւ վառարանակիրներից ու առարկաներից 1,5 մետրից պակաս հեռավորության վրա.
- վառարանի գործարկումն առանց 3 սմ հաստության ավազի շերտով լցված մետաղական տակդիրի, որը վառարանի առջեւի կողմից պետք է դուրս գա 50 սմ, իսկ կողքերից՝ 25 սմ.
- թիթեղյա վառարանների ծխնելույզը դուրս բերել տանիք. թիթեղյա վառարանների ծխնելույզներն անհրաժեշտ է երկարացնել եւ լուսամուտով դուրս հանել.
- վառարանի վրա, նրան մոտ պահել կամ չորացնել լվացք, վառելիքայտ եւ այլ վառողունակ իրեր եւ նյութեր.



- գործող վառարանները թողնել առանց հսկողության կամ դրանց հսկողությունը վստահել երեխաներին.
- հեղուկ վառելանյութով գործող ջեռուցման սարքերը, մասնավորապես՝ նավթավառ, լիցքավորել աշխատանքի ժամանակ.
- օգտագործել ոչ ստանդարտ (տնայնագործական), շիկացման բաց գալարագծերով եւ 2 կվտ հզորությունը գերազանցող էլեկտրաջեռուցիչ սարքեր.
- շահագործել վնասված մեկուսացումով (մեկուսիչ հատկությունները կորցրած) մալուխներ եւ էլեկտրալարեր.
- օգտվել անսարք վարդակներից, անջատիչներից, այլ տիպի

- էլեկտրական հարմարանքներից ու սարքերից.
- գործարանային ապահովիչների փոխարեն օգտագործել ինքնասարք ապահովիչներ, այսպես կոչված «խժուժալարեր».
- էլեկտրական տաքացման պարագաների տեղադրումն առանց հրակայուն տակդիրի եւ իրերից ու առարկաներից մեկ մետրից պակաս հեռավորության վրա.
- էլեկտրական ցանցին միացնել մորմայից շատ էլեկտրասպառիչներ.
- էլեկտրական ցանցին առանց հսկողության միացված թողնել էլեկտրաջեռուցման սարքեր ու այլ էլեկտրասպառիչներ եւ այլն:

Մ Որդեգրել, թե ոչ

Մանկատանից նորածին բալիկ վերցնել, թե՛ ավելի հասուն ո՞րն է ավելի ճիշտ: Ինչպե՞ս կորստերով նրա ժառանգականությունը: Երեխային ասե՞լ, որ նա հարազատ երեխա չէ, թե՞ թաքցնել: Նման բազմաթիվ հարցեր են անհանգստացնում այն զույգերին, ովքեր ցանկանում են երեխա որդեգրել, սակայն ինչ-ինչ պատճառներով այդ գործընթացն անընդհատ ձգձգում են: Եկեք հասկանանք, թե որոնք են իրական պատճառները:

Երեխա որդեգրելու հիմնական պատճառն այն է, որ զույգերը չեն կարողանում իրենց սեփական երեխան ունենալ, եւ այդպես են փորձում զգալ ծնող լինելու բերկրանքը: Սակայն կան դեպքեր, երբ երեխային որդեգրում են երեխաներ ունեցող զույգերը, որպեսզի նրան ընտանիքում մեծանալու, ընտանիք ունենալու հնարավորություն տան: Չույզը գիտակցում է, որ բավարար ուժ, էներգիա եւ միջոցներ ունի անընտանիք երեխայի մանկությունը փոխելու համար: Որդեգրման գործընթացը ոչ այնքան հաճելի եւ երկար մի պրոցես է: Հաճախ են լինում դեպքեր, երբ ապագա ծնողներն արդեն հստակ պատկերացումներ ունեն, թե ինչպիսին պիտի լինի իրենց երեխան եւ ստիպում են, որ երեխան կյանքի կոչի այդ պատկերացումները: Երեխայի ընթացակարգը երբեմն վիստեցնում է հիասթափեցնում է ապագա ծնողներին: Շատ կարելի է հանգամանք է, որ զույգը, որը մտադրվել է երեխա որդեգրել, հստակ գի-

տակցի, որ պետք է երեխային սիրի այնպիսին, ինչպիսին կա, սիրի, որ նա պարզապես կա, առանց այլ պահանջների: Երբ որդեգրված երեխան արդեն ապրում է ծնողների հետ, ապա ժամանակ է պետք, որ նրանք եւ երեխան կողմնորոշվեն այս նոր իրավիճակում: Որքան ապագա ծնողները պատրաստված են այդ նոր կյանքին, այնքան դժվարությունները հաղթահարելն ավելի հեշտ է լինում: Այժմ անդրադառնանք այն պատճառներին, որոնք խանգարում են զույգին երեխա որդեգրել մանկատանից:

1. Ավելի լավ է որդեգրել նորածին երեխայի
Ոմանց թվում է, որ նորածին երեխա որդեգրելն ավելի ճիշտ է, քանի որ նա դեռեւս ձեւավորված չէ եւ չունի իր կյանքի պատմությունը: Չույզերից ոմանք չեն համարձակվում որդեգրել նորածին երեխա, քանի որ նրան խնամելը, պահելն ավելի դժվար է: Իհարկե, ավելի մեծ տարիքի երեխաների հոգեբանական եւ ֆիզիկական առանձնահատկությունները պարզելն ավելի հեշտ է, քան նորածինը: Կարելի է նշել, որ այն երեխաները, ովքեր ունեն ընտանեկան կյանքի փորձ, անկախ նրանից՝ այդ փորձը դրական է եղել, թե ոչ, ավելի արագ եւ հեշտությամբ են ընտելանում եւ հարմարվում նոր ընտանեկան կյանքին: Նրանք գիտեն, թե ինչ է նշանակում լինել ընտանիքի երեխա, հեշտությամբ են լեզու գտնում նոր ծնողների հետ, նրանց լսում են, վստահում, քան այն երեխա-

ները, ովքեր ծնված օրվանից եղել են միայն մանկատանը: Այդ երեխաները դժվարությամբ են հավատում, որ իրենց կարող են սիրել, կամ չեն հասկանում, թե ինչ է սիրելը:

2. Նա պե՞տք է նման լինի որդեգրող ծնողներին
Ապագա ծնողներին նման լինելու փաստը չի կարող որոշիչ լինել: Ցանկացած երեխա, երբ սկսում է կապվել ծնողների հետ, ապա սկսում է նրանց նմանվել: Երբ զույգը վախենում է որդեգրել այլ ազգության, այլ կրոնի, այլ մտածելակերպի պատկանող երեխայի, ապա պետք է հասկանա, որ այդ ամենն այնքան էլ կարելի չէ: Նման վարքը վկայում է նաեւ այն մասին, որ զույգը դեռեւս պատրաստ չէ հանդուրժելու իրեն ոչ բնորոշ վարքային ձեւերը: Չույզը պետք է հնարավորինս համբերատար լինի, քանի որ ցանկալի արդյունքը միանգամից չի գրանցվում:

3. Մենք պետք է նրան սիրենք հարազատ երեխայի նման
Երբ մենք ասում ենք, որ սիրում ենք երեխային, դա նշանակում է, որ մենք նրան ընդունում ենք: Սիրում ենք նրան, պարզապես, որ նա կա եւ մեր երեխան է: Շատ ծնողներ անհանգստանում են, որ հնարավոր է այնպես ստացվի, որ իրենք չկարողանան ուրիշի երեխային սիրել հարազատի նման: Այս դեպքում ինչպե՞ս վարվել: Մարդիկ հույզերի արտահայտման տեսակետից շատ տարբեր են: Ոմանց հաջողվում է երեխային սիրել կարճ ժամանակահատվածում, իսկ ոմանց համար ավելի երկար ժամանակ է պա-

հանջվում: Այս դեպքում մարդը չի կարողանում դեկավարել իր հույզերը, միակ միջոցն այստեղ համբերատար սպասելն է: Հոգ տարեք երեխայի մասին, լսեք նրան, մասնակից եղեք նրա դրսի կյանքին, փորձեք հասկանալ եւ ընդունել նրան, ուրախացեք նրա հաջողություններով: Պետք չէ ստիպել ձեզ սիրել երեխային միանգամից, այդ ամենը կլինի ժամանակի ընթացքում:

4. Ավելի լավ է՝ երեխան չիմանա, որ որդեգրված է
Սուտը աղճատում է հարաբերությունները: Մարդ երբեք չի ցանկանա, որ իր մտերիմ մարդիկ իրենից ինչ-որ բան թաքցնեն: Իսկ որդեգրման փաստը կարելի է հանգամանք է անձի պատմության մեջ: Հաճախ ծնողները երեխային իր ծագման մասին տեղյակ չպահելը բացատրում են հետեւյալ կերպ՝ չեն ցանկանում ավելորդ անհանգստություն, տրավմա պատճառել երեխային: Այդ փաստը տրավմա կպատճառի երեխային այն դեպքում, երբ ծնողներն իրենք են այդպես մտածում: Երեխան դեռեւս հստակ չի պատկերացնում աշխարհի իրական պատկերը, եւ նա կյանքին, աշխարհին վերաբերվում է այնպես, ինչպես իր ծնողներն են վերաբերվում: Ամեն դեպքում երեխան այդ մասին իմանալու է հարելանից, բակի երեխաներից, արյան կարգի տարբերությունից եւ բազմաթիվ այլ դեպքերում: Որքան իրականությունը թաքցնեք, եւ որքան ուշ ասեք երեխային ճշմարտությունը, այնքան ավելի մեծ ցավ կպատճառեք նրան: Այդ իսկ պատճառով, ճիշտը երեխային իր ծագման իրական պատմությունը պատմելն է:

5. Վատ ժառանգականություն
Ծնողների ամենատարածված վախերից է, որ երեխան հանկարծ ժառանգած չլինի ինչ-որ հիվանդություն կամ հանկարծ չսկսի խմել եւ այլն: Համոզված եղեք, որ նույնիսկ հիվանդ ծնողներից ծնվում են առողջ երեխաներ:

6. Նա կցանկանա գտնել իր կենսաբանական ծնողներին
Նման ցանկություն երեխայի մեջ առաջանում է հիմնականում դեռահասության տարիքում, երբ երեխան փորձում է հասկանալ, թե իրականում ով է ինքը: Ոմանց բավական է ուղղակի իմանալ, թե նրանք ովքեր են եղել, ոմանք ուզում են նրանց հետ հանդիպել, տեսնել նրանց: Այս դեպքում մի խոչընդոտեք, այլ օգնեք նրան գտնել իր կենսաբանական ծնողներին: Որդեգրող ծնողները պետք է հասկանան, որ այստեղ նրանց ոչ մի վտանգ չի սպառնում, երեխան գեհնատում է նրանց հետ ունեցած իր հարաբերությունները: Երեխան կարող հիասթափություն ապրել, եւ այս դեպքում էլ որդեգրող ծնողները պետք է նրա կողքին լինեն, օգնեն նրան հաղթահարել հոգեկան ավրումները:

Համոզված եմ, որ այսօրվա մեր նյութը բավական օգտակար կլինի այն ծնողների համար, ովքեր ունեն արդեն որդեգրած երեխաներ կամ ուզում են որդեգրել: Հիշեք, սերը, որը դուք կմվիրեք երեխային, կփոխի նրա կյանքը եւ հնարավորություն կտա նրան ավելի բաց լինել այս աշխարհի առաջ:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու



«Տիեզերագնացները» վերադարձան «Մարսից». Թռիչքը տևեց 520 օր

Ավարտվեց 520 օր տևած «Մարս-500» փորձը, որի ընթացքում վեց մարդ գտնվում էր փակ տարածության մեջ՝ նմանակելով երկարատև արշավը դեպի Մարս:

Նրանք հատուկ սարքերում բույսեր աճեցնելու փորձեր կատարեցին, եւ նույնիսկ, հազմելով սկաֆանդրները, դուրս եկան «Մարսի մակերեսույթ», որն ստեղծվել էր հատուկ սրահում:

Բայց նրանց գլխավոր աշխատանքն, այնուամենայնիվ, սեփական առողջությանը՝ եւ ֆիզիկական, եւ հոգեկան, հետեւելն էր:

Քանի որ փորձի հիմնական նպատակն ուսումնասիրությունն էր, թե ինչպես է ազդում մարդու վրա երկար ժամանակ փակ տարածության մեջ մնալը:

Այդ փորձը քիչ հանդիմանությունների տեղիք չտվեց: Քննադատները նշում են, որ դրա ընթացքում չէին ստեղծվել այնպիսի պայմաններ, որոնք գոնե հեռավոր կերպով նմանակեին թռիչքը դեպի Մարս. երկրի վրա հնարավոր չէ անկշռելիություն ստեղծել, անձնակազմը չի ենթարկվել ճառագայթման ու մագնիսական դաշտերի ազդեցությանը, վերջապես, զուտ հոգեբանորեն, բոլոր վեց «տիեզերագնացները» գիտեին, որ պատի հետեւում մարդիկ կան ու ամեն վայրկյան իրենց կարող են դուրս բերել «նավից»:

Մյուս կողմից - եւ դրա մասին խոսում են ինչպես կասկածամիտներն, այնպես էլ այդ նախագծի կողմնակիցները - փորձն, անշուշտ, դարձավ եւ սովորական մարդկանց, եւ մասնագետների հետաքրքրության առարկան, ընդ որում՝ առաջինների հետաքրքրությունը հեղինակների համար գուցե եւ ավելի կարեւոր է, քան գիտնականների ուշադրությունը:

Փակի փակ

520 օր տևած «թռիչքը» դեպի Մարս փորձի վերջին եւ ամենաերկարատև հատվածն էր: Դրանից առաջ անցկացվել էր եւս երկու ավելի կարճատև փուլ՝ 14 եւ 105 օր տևած «արշավներ»:

Դրանք տեխնիկական փորձարկումներ էին, որոնցից առաջինի ընթացքում հարկավոր էր պարզել, թե ո՞ր չափով են այդպիսի փորձին հարմար կառուցված տիեզերանավի դեկորացիաները եւ պիտանի՞ են, արդյոք, դրանք կյանքի համար: Երկրորդի ժամանակ թեստավորվել են անձնակազմի հետ կապ պահպանող սարքավորումն ու այլ մեխանիզմներ:

Փորձարարների առջև ի սկզբանե դրված 10 հիմնական խնդիրներից կազմված ցուցակն ընդգրկում էր, նախեւառաջ, տիեզերագնացների առողջության խնդիրը. ինչպե՞ս է ազդում մարդու առողջությանը փակ տարածության մեջ երկար ժամանակ գտնվելը, երբ թռիչք է իրականացվում դեպի այլ մոլորակ:

Ուսումնասիրվել է ոչ միայն ֆիզիկա-

կան ինքնագագացողությունը, այլեւ՝ հոգեբանականը, ինչպես նաեւ փորձարկվել են տարատեսակ սարքավորումներ, որոնք նախատեսված են եղել անձնակազմի վիճակը վերահսկելու համար:

Չասկանալի է, որ «Մարս-500» փորձի ընթացքում հնարավոր չէր ամբողջությամբ ստեղծել թռիչքի եւ ֆիզիկական, եւ հոգեբանական պայմանները, սակայն նույնիսկ պարզ 500-օրյա մեկուսացումը, ինչպես ցույց տվեց փորձը, հոգեբանական տեսակետից բավական բարդ բան է:

- Զրկված եւ լինում ամենատարրական բաներից. կապույտ երկինքը, դե, ասեմք, երեկոյան պարերը՝ եւ դրանք միշտ սիրելի են: Ընտանիքս կողքիս չէ, իսկ եւ կարողում եմ, - մեկ տարի փակի տակ լինելուց



հետո պատմել է իտալացի Դիեգո Ուրբի-Նան: Տարբեր երկրների մասնագետները, որոնք հետեւել են փորձին, պատմում են, որ մասնակիցներն ապրել են բարդ իրավիճակներ, բայց միշտ ձգտել են սատարել իրար:

- Ինչը մենք ոչ մի կերպ չէինք կարող կանխատեսել՝ ինչպե՞ս են նրանք հաղթահարելու ամենօրյա, «քարացած» աշխատանքները: Բայց նրանք բավական հնարամտորեն էին վերաբերվում դրանց. Յելու-ուհինը, օրինակ, նրանք հազուստներ պատրաստեցին ինչ-որ գիտական սարքավորումներից, Օմնոյան օրերին մի փոքրիկ քարայր սարքեցին, իսկ չինական Նոր տարին դիմավորեցին ազգային երգերով: Եւ դա օգնեց նրանց հաղթահարել միօրինակ աշխատանքը, - պատմում է նախագծի ղեկավարներից մեկը՝ Ջենիֆեր Նո-Անը:

Թռիչքի նմանությունը

Այդ փորձը քննադատել են նաեւ նախկինում, ընդ որում՝ քննադատների շարքում ոչ միայն «երկրային» մասնագետներ ու գիտնականներ էին, այլ նույնիսկ տիեզերագնացներ, օրինակ, Վալենտին Լեբեդև:

Ինչպես Բի-Բի-Սի-ի-ն տված հարցազրույցում պատմել է տիեզերքի հարցերով փորձագետ Վադիմ Լուկաշելիչը, առաջադրված գիտական հարցերի տեսակե-

տից այդ փորձն անհմաստ է:

- 2 էին ստեղծվել տիեզերական թռիչքի բոլոր պայմանները: Չկա անկշռելիություն, եւ երկրի վրա դա ստեղծելն անհնար է: Եթե մենք խոսում ենք դեպի Մարս թռիչքի, այլ ոչ թե պարզապես տիեզերքում անցկացրած մեկուկես տարվա մասին, ապա առաջ է գալիս ռադիացիոն վտանգի խնդիրը, քանի որ թռիչքն իրականացնում է երկրի ռադիացիոն գոտուց դուրս, որը պաշտպանում է տիեզերագնացներին: Վերջապես, երրորդ գործոնը: Եթե մենք խոսում ենք դեպի Մարս թռիչքի մասին, ապա մենք պարտավոր ենք նախատեսել կենսապահովման փակ համակարգը՝ ջրի, սննդի, թթվածնի, - ասել է Լուկաշելիչը:

Պետք է ասել, որ կենսապահովման փակ համակարգի որոշ տարրեր, այնուամենայնիվ, տեղ ունեցել են, օրինակ, քարն կանաչեղենի աճեցման սարքավորումը անկշռելիության պայմաններում: Դրա հեղինակը՝ Ռուսաստանի ԳԱ բժշկա-կենսաբանական ինստիտուտի աշխատակից Մարկ Բեյլակովսկին, «Մարս-500» փորձարկման պետի տեղակալն էր:

Բի-Բի-Սի-ի-ն տված հարցազրույցում նա պատմել է, թե այդպիսի մոտավոր պայմաններում կատարված փորձի արժեքը փոքր չի դառնում, քանի որ տվյալ փորձն ընդամենը մարսյան արշավախմբի մի քանի կողմերի ստուգումն է: Նա թվարկեց այն ոլորտները, որոնցում անցկացվել էին ուսումնասիրությունները:

- Շատ լուրջ էին ուսումնասիրությունները հոգեֆիզիոլոգիայի, հոգեբուժության, սրտանոթային ֆիզիոլոգիայի ոլորտներում, սանհիտարահիգիենիկ, կազմակերպչական, լոգիստիկայի, սննդի մշակման հետ կապված հարցերը, անհրաժեշտ նյութերի, սարքավորումների հաշվարկները, - ասաց գիտնականը:

«Մարս-500» գիտափորձը անցկացվեց Ռուսաստանի ԳԱ բժշկա-կենսաբանական ինստիտուտի հովանու ներքո, բայց նրան միացել էին նաեւ Եվրոպական եւ Չինական տիեզերական գործակալությունները, որոնք ուղարկել էին իրենց ներկայացուցիչներին: Նրանց հետ աշխատել են նաեւ Չարավային Կորեայի, ԱՄՆ-ի, Մալայզիայի եւ այլ երկրների մասնագետները: Մարկ Բեյլակովսկու խոսքով՝ այն փաստը, որ այդ, ի սկզբանե բացառապես ռուսական գիտափորձը դարձավ միջազգային, ինքնին այնպիսի կազմակերպչական դժվարություններ ստեղծեց, որ դրանց հաղթահարումը նույնպես որոշակի փարձառության վերածվեց:

Տիեզերական մրցավազքի վերադարձը

Բոլոր դեպքերում, գիտափորձի աներկբայելի արժանիքը, եւ դրան համաձայն են բոլոր հեղինակները, մասնակիցներն ու կողմնակիցները, փաստն է, որ այն շատուշատ մարդկանց ուշադրությանն արժանացավ ամենատարբեր երկրներում:

Չանրության հետաքրքրության արժեքը տիեզերքի յուրացման գործում չի վիճարկում ոչ ոք: «Գիտափորձն ուշադրություն հրավիրեց ապագայի օդաչուավոր տիեզերական թռիչքների վրա», - ասաց Մարկ Բեյլակովսկին:

Վադիմ Լուկաշելիչը հիշեց սովետա-ամերիկյան «մեծ տիեզերական մրցավազքի» ժամանակները, երբ երկու երկրների ամբիցիաները բերեցին տիեզերական հետազոտությունների բուռն զարգացմանը: Այժմ, կարծում է նա, այնպիսի մի նպատակ, ինչպիսին Մարսն է, կարող է մեզ վերադարձնել այն տարիների տիեզերական նկրտումներին:

- Ամերիկացիները փորձում էին հասնել Գազարինին, մենք փորձում էինք հասնել Արմսթրոնգին: Ինչ-որ մրցակցություն կար: Այն ժամանակ ամերիկացիներն ասացին. «թռչում ենք Լուսին», եւ մենք սկսեցինք մտածել, որ դա լավ է, իսկ հետո նրանք ասացին «դեպի Մարս»: Չինա մենք մտածում ենք Ամերիկայի մասին, ենթադրում ենք, թե նրանք մեզանից ավել ինչ-որ բան կարող են անել... Իսկ նրանք մտածում են մեր մասին, - ասաց փորձագետը:

Մինչդեռ միայն Ռուսաստանը չէ, որ երկրային գիտափորձեր է անցկացնում պատրաստվելով մարսյան թռիչքներին: Այդպիսի նպատակ իրենց առջև դրել են, նվազագույնը, ամերիկյան NASA-ն եւ Եվրոպական ESA-ն: Ու, թեկուզ եւ, այդպիսի թռիչքների կոնկրետ պլաններ առաջմ ոչ ոք չի կազմում, առաջին երկրային գիտափորձերն արդեն իսկ արվում են:

Ռուսական «Մարս-500»-ի հետ միաժամանակ Իսպանիայի հարավում Ռիո-Տիմոգ գավառում, որի անսովոր երկրակազմն ու ապարների քիմիական կազմությունը նրան Մարսի նման է դարձնում, արդեն փորձեր են անցկացվում սկաֆանդրներով ու տարատեսակ մարսագնացներով: Վայրէջքը մոլորակի վրա հեռավոր ապագայի գործ է: Առաջմ շատ երկրներ ավելի պարզ խնդիրներ են լուծում: Միայն հաջորդ տարի դեպի Մարս պետք է ուղևորվեն երկու սարքավորում՝ ռուսական «Ֆոբոս-Գրունտ» եւ ամերիկյան Mars Science Laboratory:

Եվրոպային այդպիսի ուսումնասիրություններում առաջընթաց գրանցելու նառաջմ խանգարում է ֆինանսական ճգնաժամը: Սակայն Եվրոպացիներն այդ խնդիրը որոշել են լուծել Ռուսկոսմոսի օգնությամբ. նրանք արդեն համագործակցության պաշտոնական հրավեր են ուղարկել ռուսական գերատեսչությանը:

Ի դեպ, ինչպես կարծում է Մարկ Բեյլակովսկին, օդաչուավոր առաքելությունը դեպի Մարս, որը վաղ թե ուշ տեղի է ունենալու, բոլոր դեպքերում միջազգային է լինելու. մարսյան մրցավազքում եզրագիծը միայնակ հատելն անհնար է:

Պավել Ակայնով
Բի-Բի-Սի, Մոսկվա

Եվրամիությունն անցնում է «հակահրդեհային» ծխախոտների

Նոյեմբերի 17-ից Եվրամիության 27 երկրների խանութներում վաճառվող բոլոր ծխախոտները պետք է ինքնամարվող լինեն: Արտադրողներին պարտադիր կարգով հրամայված է օգտագործել միայն դժվար այրվող ծխախոտային թուղթ:

Միեւնույն ժամանակ նորանվաճությունը ոգեւորություն չի առաջացրել ոչ բժիշկների, ոչ էլ արտադրողների շրջանում: Առաջինները մտահոգված են, որ ինքնայրվող ծխա-

խոտ ծխելիս ծխողն ավելի շատ ներս կքաշի, իսկ դա նշանակում է, որ թուրեմի սպառումը կավելանա:

Արտադրողներն էլ իրենց կողմից արդեն զգուշացրել են, որ «հակահրդեհային» ծխախոտների արտադրությունն ավելի թանկ է ստանում, եւ համապատասխանաբար, դրանց գինը կավելանա 10-20 եվրոցենտով: Չնայած դրան, նրանք պնդում են, որ համի եւ որակի վրա դժվար այրվող ծխախոտային թուղթը չի ազդի:

Այս ծխախոտի առավելությունն այն է, որ մոխրամանում դնելիս այն մի րոպեի ընթացքում ինքնուրույն մարում է:

Եվրամիությունը նախատեսել է ԵՄ նոր որոշման ընդունումը՝ չհանգցված ծխախոտից առաջացող պատահական հրդեհների թիվը կրճատելու համար: Եվրամիության երկրներում դրանց գոհ է գնում տարեկան մինչեւ 500 մարդ:

Ֆինլանդիայում, որտեղ արդեն անցել են ինքնամարվող ծխախոտների, չհանգցված ծխախոտից առաջացած հրդեհների թիվը նվազել է 43 տոկոսով:

Դասական ծխախոտները ԵՄ-ում կվաճառվեն մինչեւ պաշարների վերջնական սպառումը:



